ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՆԱԽԱԳԱՀ

«9» սեպտեմբերի 2022 թ. № 942-Լ

ՀՐԱՄԱՆ

ԳԼԽԱՎՈՐ ՓԱՍՏԱԹՂԹՈՎ ՊԱՀԱՆՋՎՈՂ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ԵՎ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 376-րդ հոդվածի 1.1-ին մասի 2-րդ կետը՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Հաստատել գլխավոր փաստաթղթով պահանջվող տեղեկատվության բովանդակության, լրացման և ներկայացման կարգը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում իրազեկման օրվան հաջորդող օրվանից:

9/9/2022

ԱՐՏՅՈՄ ՍՄԲԱՏՅԱՆ

ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ Signed by: SMBATYAN ARTYOM 3210860416 ԱՐՏՅՈՄ ՍՄԲԱՏՅԱՆ

ՀՀ ՊԵՏԱԿԱՆ
ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ
ԿՈՄԻՏԵ

Հավելված
Հայաստանի Հանրապետության պետական
եկամուտների կոմիտեի նախագահի
«9» սեպտեմբերի 2022 թ.
№942-Լ հրամանի

ԿԱՐԳ
ԳԼԽԱՎՈՐ ՓԱՍՏԱԹՂԹՈՎ ՊԱՀԱՆՋՎՈՂ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ԵՎ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով կանոնակարգվում են Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 376-րդ հոդվածի 1.1-ին մասի 2-րդ կետի ե) ենթակետով սահմանված գլխավոր փաստաթղթի բովանդակությունը և ներկայացման պահանջները:

2. Կարգով սահմանված փաստաթուղթը հարկային մարմին է ներկայացնում բազմազգ կազմակերպության (այսուհետ՝ ԲԿ) մայր ԲԿ-ն, եթե վերջինս հանդիսանում է ՀՀ ռեզիդենտ կազմակերպություն և ԲԿ-ի նախորդ հարկային տարվա արդյունքներով համախառն եկամուտը չի գերազանցել է 750 մլն եվրոն:

3. ԲԿ-ի նախորդ հարկային տարվա արդյունքներով համախառն եկամուտը 750 մլն եվրոն գերազանցելու և հաշվետու ԲԿ հանդիսանալու դեպքում ՀՀ ռեզիդենտ ԲԿ-ի մայր կազմակերպությունը ներկայացնում է երկրների միջև փոխանակվող հաշվետվություն:

2. ԳԼԽԱՎՈՐ ՓԱՍՏԱԹՂԹԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

4. Գլխավոր փաստաթուղթը կազմվում է ազատ ոճով՝ հետևյալ կառուցվածքային բովանդակությամբ.

1) ԲԿ-ի կառուցվածքի վերաբերյալ տեղեկություններ.

ա) ԲԿ-ի կազմակերպաիրավական ձևը և սեփականության կառուցվածքը,

բ) գործունեության իրականացման աշխարհագրական տարածքները,

2) ԲԿ-ի գործունեության նկարագիրը.

ա) ԲԿ-ի տնտեսական գործունեության ընդհանուր նկարագրությունը,

բ) Ձեռնարկատիրական եկամտի ստացման վրա ազդող հիմնական գործոնները, օրինակ՝ հինգ տեսակի ապրանքների և (կամ) ծառայությունների մատակարարման շղթայի նկարագրությունն՝ ըստ ձեռնարկատիրական եկամտի մեջ ունեցած տեսակարար կշիռների, ինչպես նաև ցանկացած այլ ապրանքի և (կամ) ծառայության, որոնք ձևավորում են ԲԿ-ի ձեռնարկատիրական եկամտի ավելի քան 5 տոկոսը: Պահանջվող տեղեկությունները կարող են ներկայացվել գծապատկերի կամ աղյուսակի տեսքով:

գ) ԲԿ անդամների միջև ծառայությունների մատուցման նպատակով ձեռքբերված կարևոր պայմանավորվածությունների ցանկը և համառոտ նկարագրությունը, բացառությամբ գիտահետազոտական և փորձակոնստրուկտորական ծառայությունների, ներառյալ այդ ծառայություններ մատուցողների կարողությունների և փաստացի գտնվելու վայրի մասին տեղեկությունները, ինչպես նաև այդ ծառայությունների գծով ծախսերի բաշխման համար տրանսֆերային գնագոյացման քաղաքականությունների և ներխմբային ծառայությունների գների սահմանման մեթոդաբանության վերաբերյալ տեղեկություններ,

դ) բ) ենթակետով սահմանված ապրանքների մատակարարման և ծառայությունների մատուցման հիմնական աշխարհագրական շուկաների նկարագրությունը,

ե) համառոտ ներկայացված գործառնական վերլուծություն, որը նկարագրում է ԲԿ-ի յուրաքանչյուր անդամի կողմից արժեքի ստեղծման մեջ ունեցած հիմնական ներդրումը: Այսինքն, ԲԿ-ի յուրաքանչյուր անդամի կողմից իրականացված հիմնական գործառույթները, կրած էական ռիսկերը, ինչպես նաև օգտագործված էական ակտիվները,

զ) հաշվետու տարվա ընթացքում տնտեսական գործունեության վերակազմակերպման, ինչպես նաև ձեռքբերումների և ակտիվների վերաբաշխման գործարքների վերաբերյալ տեղեկություններ,

3) ԲԿ-ի ոչ նյութական ակտիվների նկարագրությունը"

ա) ԲԿ-ի միասնական ռազմավարության ընդհանուր նկարագրությունը ոչ նյութական ակտիվների մշակման, սեփականության և շահագործման ուղղությամբ, ներառյալ գիտահետազոտական և փորձակոնստրուկտորական աշխատանքների իրականացման համար կարողությունների և այդ աշխատանքների փաստացի կառավարման վայրի մասին տեղեկություններ,

բ) ԲԿ-ի ոչ նյութական ակտիվների վերաբերյալ տեղեկություններ, որոնք կարևոր են տրանսֆերային գնագոյացման նպատակների համար, ինչպես նաև տեղեկություններ այդ ոչ նյութական ակտիվների իրավական սեփականատերերի վերաբերյալ,

գ) ԲԿ անդամների միջև ոչ նյութական ակտիվների վերաբերյալ կարևոր պայմանավորվածությունների ցանկը և համառոտ նկարագրությունը, ներառյալ այդ ակտիվների գծով ծախսերի բաշխման պայմանավորվածությունները, հիմնական գիտահետազոտական պայմանագրերի և արտոնագրերի վերաբերյալ տեղեկություններ,

դ) ԲԿ-ի ոչ նյութական ակտիվների վերաբերյալ ընդհանուր տրանսֆերային գնագոյացման քաղաքականության վերաբերյալ տեղեկություններ,

ե) հաշվետու տարվա ընթացքում ոչ նյութական ակտիվներում ցանկացած տեղաշարժի վերաբերյալ տեղեկություններ՝ ըստ սեփականատերերի, երկրների և փոխհատուցման գումարների:

4) ԲԿ-ի ֆինանսական գործառնությունները.

ա) ԲԿ-ի ֆինանսական դրության մասին տեղեկություններ, ներառյալ ոչ փոխկապակցված ֆինանսական կազմակերպություններից ներգրավված ֆինանսական միջոցների,

բ) ԲԿ-ում առանձնացված ֆինանսավորման գործառույթ իրականացնող ԲԿ անդամի վերաբերյալ տեղեկություններ, ներառյալ դրանց պետական գրանցման կամ փաստացի ղեկավարման վայրի վերաբերյալ,

5) ԲԿ-ի ֆինանսական դրության և հարկային քաղաքականության վերաբերյալ տեղեկություններ.

ա) ԲԿ-ի հաշվետու տարվա համախմբված ֆինանսական հաշվետվությունը,

բ) ԲԿ-ի բազմակողմ նախնական գնագոյացման պայմանավորվածությունների ցանկը և համառոտ նկարագրությունը, ինչպես նաև ըստ երկրների՝ եկամուտների վերաբաշխմանն առնչվող հարկային իրազեկումների վերաբերյալ տեղեկություններ:

3. ԳԼԽԱՎՈՐ ՓԱՍՏԱԹՂԹԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄԸ ՀԱՐԿԱՅԻՆ ՄԱՐՄԻՆ

5. Գլխավոր փաստաթղթով սահմանված տեղեկատվությունը ՀՀ ռեզիդենտ ԲԿ-ն հարկային մարմին է ներկայացնում վերջինիս ուղարկած գրավոր ծանուցման ստացման ամսաթվից հետո՝ 30 աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային տարբերակով՝ հայերեն,

անգլերեն կամ ռուսերեն լեզուներով՝ պայմանով, որ անգլերեն կամ ռուսերեն լեզվով փաստաթղթերը հարկային մարմնի պահանջով թարգմանվեն հայերեն և ներկայացվեն հարկային մարմին՝ այդ մասին գրավոր ծանուցումն ստանալուց հետո՝ տասը աշխատանքային օրվա ընթացքում:

6. Հարկային մարմինը կարող է պահանջել լրացուցիչ այլ տեղեկատվություն, որը ՀՀ ռեզիդենտ ԲԿ-ն հարկային մարմին է ներկայացնում վերջինիս ուղարկած գրավոր ծանուցման ստացման ամսաթվից հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում:

7. Հարկային մարմինը կարող է նաև պահանջել հարցազրույցի անցկացում ՀՀ ռեզիդենտ ԲԿ-ի և (կամ) նրա ներկայացուցիչների հետ, որի վերաբերյալ ուղարկված գրավոր ծանուցման ստացման ամսաթվից հետո՝ 5 աշխատանքային օրվա ընթացքում, ՀՀ ռեզիդենտ ԲԿ-ն պետք է գրավոր ներկայացնի հարցազրույցի անցկացման վայրի, ժամկետների և մասնակիցների մասին տեղեկատվությունը: